ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- 2023 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի №460Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի №288Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով «ԱՐ-ՄՈԲԻԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2023 թվականի մարտի 15-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Հանձնաժողովի՝

1) 2009 թվականի օգոստոսի 5-ի «ԱՐ-ՄՈԲԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №460Ա որոշմամբ տրամադրված և Հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 25-ի №13Ա որոշմամբ ընկերության անվամբ վերաձևակերպված ռադիոհաճախականության օգտագործման №0614 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ ենթակետում «Արաբկիր 49» բառերը փոխարինել «Ալեքսեյ Հեքիմյան» բառերով.

2) 2010 թվականի հունիսի 9-ի «ԱՐ-ՄՈԲԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված №7/2-12/3 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №288Ա որոշմամբ երկարաձգված, նոր խմբագրությամբ շարադրված և Հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 25-ի №13Ա որոշմամբ ընկերության անվամբ վերաձևակերպված ռադիոհաճախականության օգտագործման №0800 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ ենթակետում «Արաբկիրի 49» բառերը փոխարինել «Ալեքսեյ Հեքիմյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
----- 2023թ.